

« ____ » _____ 2014թ.

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի խորհրդի

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Սույն աշխատակարգը սահմանում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի խորհրդի (այսուհետ՝ կրթահամալիրի խորհուրդ, խորհուրդ) նախագահի, քարտուղարի և անդամների իրավասությունները, նիստերի նախապատրաստման, գումարման, անցկացման, քվեարկության, նիստերի արձանագրման, որոշումների ընդունման կարգը:
- 1.2 Կրթահամալիրի խորհրդի կազմը և աշխատակարգը, «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 20-րդ կետին համապատասխան, հաստատում է կրթահամալիրի պետը:

2. Կրթահամալիրի խորհրդի կառուցվածքը և իրավասությունները

- 2.1 Կրթահամալիրի խորհուրդը կրթահամալիրի պետին առընթեր խորհրդակցական մարմին է, որի աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է կրթահամալիրի պետը:
- 2.2 Կրթահամալիրի խորհուրդն ունի նախագահ և քարտուղար:
Ըստ անհրաժեշտության՝ խորհուրդը ձևավորում է ժամանակավոր հանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր, որոնք ուսումնասիրում են առաջադրված հարցերը, պատրաստում նախագծեր և դրանք ներկայացնում խորհրդին:
- 2.3 Կրթահամալիրի խորհուրդը՝
- 1) քննարկում է կրթահամալիրի կանոնադրության, ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագրքի, դրանց մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագծերը;
 - 2) քննարկում և կրթահամալիրի պետի հաստատմանն է ներկայացնում կրթահամալիրի գործունեության գլխավոր ուղղությունները;
 - 3) կրթահամալիրի պետին է ներկայացնում առաջարկություններ՝ սովորողներին խրախուսելու վերաբերյալ;
 - 4) քննարկում է կրթահամալիրի միջազգային կապերի ծրագրերը և ուղղությունները;

- 5) քննարկում է կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները;
- 6) անհրաժեշտության դեպքում համալրում է կրթահամալիրում ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ հիմնական հաշվառման փաստաթղթերի ցանկը;
- 7) անհրաժեշտության դեպքում սահմանում է դասավանդման նոր ձևեր;
- 8) քննարկում է կրթահամալիրի աշխատակիցների սոցիալական խնդիրներին վերաբերող հարցեր;
- 9) քննարկում և կարող է սովորողի խնդրանքը բավարարող միջնորդություն ներկայացնել կրթահամալիրի պետին՝ նույն քննությունից կամ սուբարքից կամ կուրսային աշխատանքի կամ պրակտիկումի պաշտպանությունից երեք անգամ անբավարար գնահատական ստացած սովորողին վերահանձնման ևս մեկ հնարավորություն տալու մասին:

2.4 Կրթահամալիրի խորհրդի նախագահը՝

- 1) նախապատրաստում և ղեկավարում է խորհրդի նիստերը,
- 2) ստորագրում է խորհրդի արձանագրությունները և որոշումները,
- 3) իրականացնում է սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

2.5 Կրթահամալիրի խորհրդի քարտուղարը՝

- 1) ծանուցում է խորհրդի անդամներին նիստի օրվա, տեղի և օրակարգի մասին,
- 2) գրանցում է նիստին մասնակցող խորհրդի անդամներին,
- 3) կազմում և ստորագրում է խորհրդի նիստերի արձանագրությունը,
- 4) կատարում է սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

3. Կրթահամալիրի խորհրդի նիստերի գումարումը

- 3.1 Կրթահամալիրի խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերի նախապատրաստումն իրականացնում են խորհրդի նախագահը և քարտուղարը՝ անհրաժեշտության դեպքում այդ աշխատանքներին ներգրավելով խորհրդի մյուս անդամներին:
- 3.2 Կրթահամալիրի խորհրդի նիստն իրավագոր է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդի մասնակցության դեպքում:
- 3.3 Կրթահամալիրի խորհրդի իրավասությունն իրականացվում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:
- 3.4 Կրթահամալիրի խորհրդի հերթական նիստերը գումարվում են առնվազն տարին մեկ անգամ՝ նրա նախագահի կողմից:
- 3.5 Կրթահամալիրի խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ նրա նախագահի կողմից, սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև կրթահամալիրի խորհրդի կամ գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով:
- 3.6 Կրթահամալիրի խորհրդի կամ գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և օրակարգով:
- 3.7 Խորհրդի անդամներին, նիստի հրավիրման և դրա օրակարգի մասին, խորհրդի քարտուղարը տեղեկացնում է առնվազն հինգ օր առաջ՝ գրավոր ծանուցմամբ:

4. Կրթահամալիրի խորհրդի արտահերթ նիստերի գումարման կարգը

- 4.1 Կրթահամալիրի խորհրդի արտահերթ նիստ գումարելու խորհրդի նախագահին ներկայացված գրավոր պահանջը պետք է պարունակի խորհրդի օրակարգում առաջարկվող հարցերը՝ արտահերթ նիստը պահանջող խորհրդի անդամների կամ կրթահամալիրի գիտական խորհրդի անդամների ստորագրություններով:
- 4.2 Կրթահամալիրի խորհրդի, կրթահամալիրի գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի գրավոր պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում, կրթահամալիրի խորհրդի նախագահը պետք է ընդունի կրթահամալիրի խորհրդի նիստ գումարելու մասին որոշում:

5. Կրթահամալիրի խորհրդի նիստերի քվեակազմը

- 5.1 Կրթահամալիրի խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է խորհրդի քարտուղարը՝ նիստը սկսելուց առաջ: Քվեակազմը չապահովելու դեպքում, նախագահի որոշմամբ, գրանցումը կարող է երկարաձգվել մինչև քվեակազմի ապահովումը կամ նիստը հետաձգվում է:
- 5.2 Կրթահամալիրի խորհրդի քվեակազմի բացակայության պատճառով հետաձգված նիստը նույն օրակարգով գումարվում է ընդհանուր կարգով:

6. Կրթահամալիրի խորհրդի նիստերի անցկացման ընթացակարգը

- 6.1 Կրթահամալիրի խորհրդի նախագահը, բացելով կրթահամալիրի խորհրդի նիստը, հայտարարում է քվեակազմի առկայությունը և քվեարկության է դնում օրակարգը:
- 6.2 Կրթահամալիրի խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:
- 6.3 Օրակարգի հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, էլույթների տևողությունը որոշում է խորհուրդը:

7. Կրթահամալիրի խորհրդում քվեարկության կարգը

- 7.1 Կրթահամալիրի խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե կրթահամալիրի կանոնադրությամբ, սույն աշխատակարգով կամ խորհրդի որոշմամբ քվեարկության այլ կարգ չի սահմանվել:
- 7.2 Կրթահամալիրի խորհրդը կարող է ընդունել որոշում փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու մասին:

8. Կրթահամալիրի խորհրդի արձանագրությունը

- 8.1 Կրթահամալիրի խորհրդի արձանագրությունը երկու օրինակով կազմում է կրթահամալիրի խորհրդի քարտուղարը՝ խորհրդի նիստն ավարտվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում: Արձանագրությունն ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:
- 8.2 Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ժամանակը, քվեակազմը, նախագահը, քարտուղարը, օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները:

9. Կրթահամալիրի խորհրդի որոշումները

- 9.1 Կրթահամալիրի խորհրդի որոշումներն ուժի մեջ են մտնում կրթահամալիրի պետի կողմից հաստատվելուց հետո: